

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե»

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 21/1

3 մայիսի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 16.04.2013թ-ի նիստում քննության է առնվել <Վ.Գ. և Որդիներ> ՍՊԸ 20.03.2013թ. դիմումը «ԿԱ ՊԵԿ նախագահի 05.10.2012թ-ի թիվ 1001430/1 հանձնարարագրի և «ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 25.01.2013թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 066294 որոշման դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն <Վ.Գ. և Որդիներ> ՍՊԸ դիմումը մերժվել է:

<Վ.Գ. և որդիներ> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

<Վ.Գ. և որդիներ> ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) գրանցվել է 17.02.2006թ.-ին, ընկերությունն իրականացնում է էլեկտրաէներգիայի արտադրություն և վաճառք:

Համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 12.10.2011թ-ի թիվ 1001430 հանձնարարագրի «ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ կողմից ընկերությունում իրականացվել է ստուգում, որի արդյունքում կազմվել է 12.12.2011թ-ի թիվ 1001430 ակտը: Ընկերության կողմից նշված ակտը բողոքարկվել է «վարչական դատարանում:

«վարչական դատարանի 31.07.2012թ-ի վճռով ընկերության բողոքը բավարարվել է՝ ստուգման ակտը ճանաչվել է անվավեր:

«վարչական վերաքննիչ դատարանի 10.12.2012թ-ի որոշմամբ վերոգրյալ վճիռը թողնվել է անփոփոխ: Այսինքն՝ ընկերության բողոքը բավարարվել է՝ ստուգման ակտը ճանաչվել է անվավեր: Որից հետո «ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից հրապարակվել է թիվ 1001430/1 վերստուգման հանձնարարագիրը, որի օրինականությունը վիճարկվել է ընկերության կողմից: Բացի այդ, 25.01.2013թ-ին «ԿԱ ՊԵԿ-ի կողմից կայացվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 066294 որոշումը, որը նույնպես չի բխում օրենսդրության պահանջներից:

Ելելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է «ԿԱ ՊԵԿ նախագահի 05.10.2012թ-ի թիվ 1001430/1 վերստուգման հանձնարարագիրը և «ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 25.01.2013թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 066294 որոշումը ճանաչել անվավեր:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության տնօրենի ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության դիմումը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

«ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության 1-ին բաժնի հետաքննիչ Վ.Զաքարյանը, վերանայելով <Վ.Գ. և որդիներ> ՍՊԸ վերաբերյալ նախապատրաստվող նյութերը պարզել է, որ «ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետի 12.01.2012թ-ի թիվ 40 գրությամբ ՊԵԿ հետաքննության վարչության 1-ին բաժնի փաստաթղթեր են ստացվել <Վ.Գ. և որդիներ> ՍՊԸ վերաբերյալ: Փաստաթղթերի ուսումնասիրության և ՊԵԿ հետաքննության վարչությունում նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ «ԿԱ ՊԵԿ նախագահի 12.10.2011թ-ի թիվ 1001430 հանձնարարագրի համաձայն, ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ աշխատակիցների կողմից <Վ.Գ. և որդիներ> ՍՊԸ-ում կատարվել է պետական քլուզիի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում:

Ստուգման արդյունքում 25.11.2011թ-ին կազմվել է թիվ 1001430 ստուգման ակտը և ընկերությանն է առաջադրվել 23.967.487 դրամ հարկային պարտավորություն:

<Վ.Գ. և որդիներ> ՍՊԸ կողմից թիվ 1001430 ստուգման ակտը վիճարկվել է «վարչական դատարան: Համաձայն «վարչական դատարանի 31.07.2012թ-ի թիվ

ՎԴՅ/0053/05/12 վճռի, անվավեր է ճանաչվել ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ 25.11.2011թ-ի թիվ 1001430 ստուգման ակտը:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 56-րդ հոդվածի և 57-րդ հոդվածի 2-րդ կետի 15-րդ ենթակետի դրույթներով, ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության 1-ին բաժնի հետաքննիչ Վ.Զաքարյանը որոշել է «Վ.Գ. և որդիներ» ՍՊԸ-ում նշանակել պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Արդյունքում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 05.10.2012թ-ին հրապարակվել է թիվ 1001430/1 հանձնարարագրը՝ ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում տնտեսավարող սուբյեկտի գործունեության ոլորտում օրենքի և այլ իրավական ակտերի հիման վրա հարկային մարմնին ներկայացված հաշվետվությունների, հաշվարկների և այդ փաստաթղթերի արժանահավատությունը պարզելու, ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու նպատակով բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում անցկացնելու վերաբերյալ:

Հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության 57-րդ հոդվածի 2-րդ կետի 15-րդ ենթակետի համաձայն, հետաքննության մարմինն իրավունք ունի պահանջել կատարել վերստուգումներ, գույքագրումներ և այլ ստուգողական գործողություններ:

Վերոգրյալից հետևում է, որ տվյալ դեպքում ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության մարմնի կողմից վերստուգում իրականացնելը հանդիսանում է ՀՀ օրենսդրությամբ վերջինիս վերապահված իրավունք, որի կիրառման հարցը տվյալ դեպքում քննարկման ենթակա չէ, իսկ հարկային մարմինը պարտավոր է կատարել այդ որոշման պահանջները:

Ինչ վերաբերում է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 25.01.2013թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 066294 որոշման դեմ բերված գանգատին, ապա այն չի կարող քննության առնվել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի կողմից, քանի որ տրվել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված ժամկետի խախտմամբ: Այդ մասին ընկերությանը հայտնվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ 22.03.2013թ-ի թիվ 11-1/2971-13 գրությամբ:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի «Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին» N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Մ է՝

«Վ.Գ. և որդիներ» ՍՊԸ 20.03.2013թ-ի դիմումը մերժել:

Որոշմանը չհամապատասխանելու և տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատարի մասին որոշումը ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ